Հարգելի երիտասարդ,

«ԷվենտՏուրա» իրադարձային զբոսաշրջության զարգացման գործակալությունը հայտարարում է «վճարվող ինթերնշիփից աշխատանք» «նախագծերի համակարգող (Project Coordinator)» հաստիքի համար: Ինթերնշիփը անցկացվելու է ընկերության գրասենյակում, որից հետո լավագույն արդյունքները գրանցած փորձնակը կստանա աշխատանքի առաջարկ:

Կարող են դիմել կառավարման, սոցիոլոգիայի, զբոսաշրության, հանրային կապերի կամ հարակից ոլորտներում սովորող կամ ավարտած ցանկացած ոք:

Ծրագրի փուլերը.

1-ին փուլ: **Ինքնակենսագրականների դիտարկում**

Դիմելու համար անհրաժեշտ է ուղարկել Ձեր CV-ին hr@eventtoura.org էլ հասցեին՝ նպատակ դաշտում գրելով «Վճարվող ինթերնշիփ» կամ եթե նույն հաստիքի համար աշխատանք եք փնտրում, ապա ՝ «Նախագծերի համակարգող: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 093 55 63 38 հեռախոսահամարին:

Ուսումնասիրվելու է յուրաքանչյուրի CV-ին, հասկանալու համար թե որքանով է թեկնածուն համապատասխանում նշված հաստիքին:

2-րդ փուլ: **Հարցազրույց**

CV-ների դիտարկման փուլը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների հետ կանցկացվի բանավոր հարցազրույց:

3-րդ փուլ: **Փորձաշրջան**

Առաջին երկու փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցները կանցնեն մինչև 10-օրյա անվճար փորձաշրջան, որը հնարավորություն կտա հասկանալու անձնային հատկանիշները, արագ ըմբռնման և վերլուծական հմտությունները և հաստիքի համար ինթերնշիփ անցնելու համապատասխանությունը: Ինչպես նաև դա հնարավություն կտա թեկնածուին հասկանալու ցանկանում է շարունակել, թե՝ ոչ:

4-րդ փուլ: **Ինթերնշիփ**

Փորձաշրջանն անցնելուց հետո սկսվում է վճարվող ինթերնշիփի բուն փուլը: Յուրաքանչյուր մասնակցի համար ստեղծվում է անհատական աշխատանքային պլան՝ ելնելով առկա հմտություններից: Յուրաքանչյուրն ունենում է մենթոր, ով պատասխանատու է լինում առավելագույն արդյունավետություն ստանալու համար:

5-րդ փուլ: **Աշխատանքի առաջարկ**

Ինթերնշիփի ավարտից հետո աշխատանքի մեջ լավագույնս դրսևորած թեկնածուների հետ կանցկացվի հարցազրույց, որի ժամանակ կստանան աշխատանքի առաջարկ: Համաձայնելու դեպքում թեկնածուն գրանցվում է ընկերությունում որպես աշխատող և անմիջապես հաջորդ աշխատանքային օրվանից սկսում իր աշխատանքը:

Պարտականություններ.

Ընկերության առաջիկա նախագծերի հետ կապված աշխատաքների համակարգում, ընթացիկ նախապատրաստական աշխատանքեր: Մասնավորապես՝

1. Տվյալների բազաների թարմացում, հավաքագրում
2. Անհրաժեշտ զանգեր գործընկերներին, մասնակիցներին, շարունակական կապի պահպանում,
3. Անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում,
4. Նամակագրություն,
5. Ըստ անհրաժեշտության, նախագծերին վերաբերվող որևէ գործընթացի կազմակերպում:

Պահանջվող որակավորումներ և հմտություններ.

1. ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ,
2. ՆԱԽԱՁԵՌՆՈՂ,
3. Կրեատիվ մտածելակերպ,
4. Արագ կողմնորոշվելու ունակություն,
5. Ռուսերենի կամ անգլերենի բանավոր և գրավոր իմացությունը պարտադիր է (մակարդակը՝ միջինից բարձր),
6. Կազմակերպչական հմտություններ, ներառյալ՝ բազմակի առաջադրանքներ և ժամանակի կառավարում,
7. Պատասխանատու, պարտաճանաչ:

Ի՞նչ կտա այս ինթերնշիփը.

- Առաջին հերթին աշխատանքային փորձ,
- Նախագծերի պլանավորման, համակարգման հմտություններ,
- Վերլուծելու հմտություն և նախաձեռնողական լինելու կարողություն,
- Մարդկանց հետ հաղորդակցվելու և վաճառքի հմտությունների զարգացում,
- Բազմակողմանի և բազմաֆունկցիոնալ զարգացման նախադրյալներ,
- Կողմնորոշվել աշխատանքային մասնագիտացման հարցում,
- Ինթերնշիփը հաջող ավարտելուց հետո տրամադրվում է հավաստագիր:

Աշխատավարձ, աշխատանքային օրեր և ժամեր.

-Բուն ինթերնշիփի համար յուրաքանչյուր 30 աշխատանքային օրվա համար, որի դեպքում պետք է ապահովվի ընդհանուր 120 աշխատանքային ժամ, կվճարվի **50,000 դրամ**: Եթե թեկնածուն ցանկանում է կարող է միայն վճարվող ինթերնշիփ անցնել և յուրաքանչյուր 30 աշխատանքային օրվա (ընդհանուր 120 ժամ) համար վճարվել:

-30 աշխատանքային օրը լրանալու դեպքում, եթե ինթերնը ստանում է աշխատանքի առաջարկ, ապա անցնում է 1 ամիս աշխատանքային փորձաշրջան, որի համար կվճարվի **100,000 դրամ**:

-Աշխատանքի անցնելու դեպքում աշխատավարձը սկզբնական կլինի ֆիքսված ամսական **200,000 դրամ՝ հարկերը ներառյալ:** 1 տարի հետո, ըստ աշխատակցի ձեռք բերած հմտությունների և աշխատանքի արդյունավետությանը, կլինի աշխատավարձի վերանայում:

Առաջադրանքների լիակատար իրագործումը և պարտաճանաչ հաճախելը պարտադիր պայման է վճարի համար:

Ինթերնշիփի սկսման ամսաթիվ՝ հնարավորինս շուտ,

Աշխատանքային օրերը և ժամերը՝

Երկ.- ուրբ՝ 10:00-18:30, իսկ մարտից մինչ օգոստոս նաև շբթ.՝ 10:00-17:00, որից 1ժամը ընդմիջման համար է:

Ինթերնը հնարավորություն ունի ինքնուրույն կազմելու իր գրաֆիկը, նախապես համաձայնացնելով ընկերության ՄՌԿ-ի հետ: Նշված աշխատանքային օրերի և ժամերի սահմանում պետք է շաբաթական 5 օր, օրական 4-5 ժամ տրամադրի ինթերնշիփի համար, իսկ աշխատանքային փորձաշրջանի դեպքում աշխատակիցների նույն աշխատանքային գրաֆիկով:

Հ.Գ. Ինթերնշիփի ավարտից հետո ընկերությունը չի պարտավորվում մասնակցին ընդունել աշխատանքի: Սակայն լավագույն ցուցանիշները գրանցած մասնակիցների տվյալները կպահպանվեն ընկերության բազայում և հետագայում կապ կհաստատվի ՄՌԿ-ի կողմից ընկերությունում թափուր հաստիքի առկայության ժամանակ: